

# ԱԼԻՔ



0 0 0 0 0 0

www.alikonline.ir  
E-mail: alikmail@hyenet.ir

## «Իրանը պատրաստ է՝ հիւրընկալելու Սիրիայի կառավարության և ընդդիմադիրների միջև բանակցությունը»

«Ֆարս» լրատու գործակալություն-Իրանի արտգործնախարարը Իրանի պատրաստակամությունն է յայտնել Սիրիայի կառավարության ու ընդդիմադիրների միջև բանակցության համար ենթահող ստեղծելու եւ բանակցությունը հիւրընկալելու համար: Սայեհին նշեց, «Ցուսանք, որ Սիրիան ընթացող դժգոհ կայունություն է Սիրիայի կառավարության տապալումը պատկերացնելը (Շար. 10-րդ էջում)»

## Կրեւիլը հերքում է Զամբոնի յայտարարությունը, թէ Պուկինը համաձայն է Ասադի հեռանալուն

«tert.am» - Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի մամուլը քարտուղար Դմիտրի Պեսկովը օգոստոսի 1-ին յայտարարեց, որ իրականությունը չի համապատասխանում Անդրեյ Կրեւիլի վարչապետ Դեյվիդ Ֆամերոնի վերջերս արած յայտարարությունները: Վարչապետը հերքեց «Ինտերֆաքս» գործակալության հերքումը: Անդրեյ Կրեւիլի վարչապետը յայտարարել էր, թէ Պուտինը իր հետ գրոյցում համաձայնություն է տեսել Սիրիայի (Շար. 10-րդ էջում)

Հիւսիսարեւմտ, 2 Օգոստոսի 2012, 81-րդ ՏԱՐԻ, ԹԻ 156 (21435), հատվածում 3500 ռիալ ۱۰ صفحه شنبه ۱۲ مرداد ۱۳۹۱ ، سال هشتاد و یکم، سال هشتاد و یکم، شماره ۱۵۶ (۲۱۴۳۵)، ۱۰ صفحه

## Օրակարգի վրայ է սիրիահայության խնդիրը



31 յուլ. 2012 թ.- ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի գրասենեակում տեղի ունեցան քննարկումներ՝ Սիրիայում ստեղծված կացության վերաբերյալ: Քննարկվել են Սիրիայի իրավիճակը, սիրիահայության ճակատագիրը եւ այդ ուղղությամբ տարբեր ներկուսակցական եւ պետական մակարդակներով նախատեսող աշխատանքների ընթացքը: Արդէն ստեղծվել է ՀՅԴ յատուկ յանձնախումբ, որը կը գրաւի սիրիահայության խնդիրներով: Քննարկմանը ներկայ էր ՀՅԴ Բիւրոյի անդամ Գէորգի Պետրոսեանը:

## Իրանը Կասպիականում ընդիր հում նաւթ է յայտնաբերել

«ՄէՆ» լրատու գործակալության համաձայն՝ Կասպիականի նաւթընկերության գլխավոր տնօրէն Ալի Օսուլին առաւել բացատրութիւններ է փոխանցել Կասպիական ծովում Իրանի նաւթային յայտնաբերութիւնների մասին եւ յայտարարել. «Իրանը Կասպիականում աշխարհի ամենաընտիր հում նաւթն է յայտնաբերել»: Օսուլին նշել է, որ իրականացած ուսումնասիրութիւնների համաձայն եւ հետազոտման առումով առաջին հորատումից յետոյ՝ պարզել է, որ յիշեալ վայրում յայտնաբերւած հում նաւթի պաշարը շուրջ երկու միլիարդ տակաոն է:

## Չինաստանը բողոքել է Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նոր բոյկոտների դէմ

«Ֆարս» լրատու գործակալության համաձայն՝ Չինաստանի արտգործնախարարութիւնը մի հաղորդագրութեամբ բողոքել է Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի նոր շրջափակումներին: Չինաստանը Վաշինգտոնից պահանջել է բեկանել այդ շրջափակումները: Չինաստանի արտգործնախարարութիւնը Վաշինգտոնից պահանջեց բեկանել «Քանյոն» բանկի դէմ շրջափակումը, որը, ըստ ԱՄՆ-ի, խախտել է միջազգային օրէնքները, հակառակ դէպքում՝ լուրջ կը վնասւեն երկու երկրների յարաբերութիւնները: Հաղորդման համաձայն՝ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման երեքաբար զգուշացրեց Իրանը շրջափակումներէ քան իրանի նաւթարդիւնաբերութեան ու արտածման, նաեւ չինական ու իրաքեան երկու բանկերի դէմ:

## Թուրքիան փանկեր է տեղակայում Սիրիայի հեղ սահմանին

«tert.am» - Թուրքական բանակը շարունակում է զինտեխնիկա տեղակայել Սիրիայի հետ սահմանին: Թուրքական զինուժի 5-րդ զրահատանկային բրիգադի տանկերը բեռնատար մեքենաներով տեղակայել են սահմանամերձ Ղազանթեքի կողմ: Ինչպէս տեղեկացրել է Թուրքական «Միլլիէթ»-ը, զինտեխնիկան օգոստոսի 1-ի առաւօտեան տեղակայել է սահմանի «պայթիւնավտանգ հատածներում»: Եւս վեց տանկեր մտնեցին են սահմանին՝ Ջէյլանփնար եւ Սուրուշ շրջաններում: «Հիւրիէթ»-ը տեղեկացրել է, որ օդ են բարձրացրել նաեւ անօդաչու թռչող սարքեր, որոնք մասնաւորապէս Բաթմանի մօտակայքում սահմանի 24-ժամեայ վերահսկողութիւն են կատարում: Թուրքական կողմը պնդում է, որ Թուրքական զինուժը ուժերն այդ կերպ պատրաստում են զինակայել Սիրիայի սահմանից դէպի Թուրքիա քուրդ զինեալների հաւանական մուտքին:




## ԱՄՆ-ը Թուրքիայի հեղ շարունակում է քննարկել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցը

«yerkimedia.am» - ԱՄՆ-ն շահագրգռուած է հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցում առաջնադասումը, յուլիսի 30-ին Ստամբուլում կայացած կլոր սեղանի ընթացքում մամուլի ներկայացուցիչներին ասել է ԱՄՆ-ի արտգործնախարարի Եւրոպայի եւ Եւրասիայի գործերով օգնական Ֆրիդայ Գորդոնը: Հանդիպմանը մասնաւորապէս քննարկվել են Սիրիայի եւ Քուրդստանի Բանտրական կուսակցութեան առնչուող հարցերը: ԱՄՆ-ի արտգործնախարարութեան պաշտօնական կայքի հաղորդմամբ՝ Գորդոնը նշել է, որ այլ հարցերի հետ մէկտեղ թուրքական կողմի հետ յանձնարարական կողմակաւ իրավիճակի եւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցերը: Թուրքիայում մամուլի ազատութեան առնչութեամբ լրագրողները մէկն ասել է. «Ամէն անգամ Թուրքիայում մամուլի ազատութեան մասին հարց ծագելիս՝ լուր էնք, որ ԱՄՆ-ի արտգործնախարար Քրիսթոֆեր Նուշուուզը հետեւում է եւ որ այդ մասին խօսել է իր գործընկերների հետ: Իսկ ի՞նչ է նա խօսում: Յատկապէս, ինչպէս է ԱՄՆ-ն անհանգստանում»: Ի պատասխան Գորդոնը նշել է. «Նա շատ ուշադիր հետեւում է, եւ եւ կարծում եմ՝ Թուրքիա կատարած այցի ընթացքում նա բաւական յստակ շօշափեց այդ հարցը: Նա հրապարակաւ յայտարարեց, որ Թուրքիան, ինչպէս եւ մնացած երկրները, չի կարող իր պարտականութիւնները կատարել տեղեկատուութեան ազատ հոսքի բացակայութեան պայմաններում, եւ որ երկրներն աւելի ուժեղ են, երբ կայ ազատ խօսքի հնարաւորութիւն: Հէնց զրա վրայ է հիմնւած ԱՄՆ-ի համակարգը: Նա յստակ կերպով խօսում է այդ մասին Թուրք գործընկերների հետ անձնական հանդիպումների ընթացքում, եւ դա ԱՄՆ-ի վարչակազմի եւ ամերիկեան հանրութեան խորին համոզմունքն է»:



## Դամասկոսում մարտերն արդէն քրիստոնէական թաղամասերում են. Ասադն ուղերձ է յղել բանակին

«tert.am» - Սիրիական բանակի եւ զինեալ ընդդիմութեան բախումների արդիւնքից է կախած ինչպէս երկրի ներկան, այնպէս էլ՝ ապագան: Գրել է Սիրիայի նախագահ Բաշար Ասադը՝ գործին ուղղած ուղերձում: Ի դէպ, Դամասկոսում բարձրաստիճան զինուորականների սպանութիւնից յետոյ՝ սա Ասադի առաջին յայտարարութիւնն է: Նա շնորհակալութիւն է յայտնել զինուորականներին՝ «հաջողութեամբ խմբաւորումներ»-ի դէմ պայքարելու համար: «Եւս հաւատում եմ ձեզ, մեր ժողովուրդը նոյնպէս հաւատում է եւ կարծում է, որ դուք պահպանեցիք մեր հասարակութեան արժէքները»,- ասել է Ասադը: Ինչպէս տեղեկացրել է BBC-ն, երէկ մարտեր են սկսել Դամասկոսի երկու քրիստոնէական թաղամասերում, որտեղ մինչ այժմ բախումներ տեղի չէին ունեցել: (Շար. 10-րդ էջում)



## Բայդէն-Բարզանի հեռախօսազրոյց

«Քուրդական ազգային միութիւն» կուսակցութիւնը մի հաղորդագրութիւն հրատարակելով յայտնել է, որ Հիւսիսային Իրաքի քուրդական շրջանի նախագահ Մասուդ Բարզանին ԱՄՆ-ի փոխնախագահ Ջօ Բայդէնի հետ հեռախօսազրոյցի ընթացքում քննարկել է Իրաքում եւ տարածաշրջանում քաղաքական իրավիճակը: Հաղորդագրութիւնում նշել է, որ հեռախօսազրոյցի ընթացքում Իրաքի, Հիւսիսային Իրաքի ու տարածաշրջանի քաղաքական իրավիճակի շուրջ տեսակէտներ են փոխանակվել եւ խորհրդակցութիւն է տեղի ունեցել:



## ԴԻՏԱՆԿԻՆ Հանդիպում՝ սիրիահայերի հեղ

ՀՀ Սփիւռքի նախարարութիւնում կայացաւ հերթական հանդիպումը՝ Սիրիայից վերջին շրջանում ժամանած, ինչպէս նաեւ՝ երեւանաբնակ սիրիահայերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկեցին սիրիահայերի վիճակը եւ նրանց կողմից բարձրացած հիմնախնդիրներին ներկայացրեցին: ՀՀ Սփիւռքի նախարարը տեղեկացրեց, որ ՀՀ նախագահի յանձնարարութեամբ այս սիրիահայերի հիմնախնդիրներով հրապարակաւ յայտարարութիւնը՝ ՀՀ Սփիւռքի նախարարութիւնն է: Ամիսներ առաջ նախարարութիւնում ստեղծվել է աշխատանքային խումբ, որը ոչ միայն բազմակողմանի ուսումնասիրել է սիրիահայերի կողմից բարձրացած հիմնախնդիրները, այլ դասակարգել է դրանք եւ վերահասցեագրել է պետական կառավարման այն մարմիններին, որոնց գործունէութեան ոլորտին դրանք առնչվել են: Նախարարը մասնաւորապէս տեղեկացրեց, որ ստեղծւած աշխատանքային խումբը օգնական կայանում դիմաւորում է սիրիահայերին, բաժանում տեղեկատուական թերթներ եւ օրալ ընթացքում ընդունում է այն սիրիահայերին, որոնք այցելում են ՀՀ Սփիւռքի նախարարութիւն: Այցելուները, որոնք թիւը անցնում է 10-ից, տարբեր խնդիրներով դիմում են նախարարութիւն: ՏՀԿ. Յակոբեանը նշեց, որ մօտակայ 10 օրալ ընթացքում ուժի մէջ կը մտնեն ՀՀ կառավարութեան կողմից ընդունւած երկու կարեւոր որոշումներ, որոնք ընդունվել են սիրիահայերի պահանջներին համապատասխան: Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքացիութիւն ստացած սիրիահայերն առաջին անգամ անձնագիր կարող են ստանալ Սիրիայում գործող դիւանագիտական ներկայացուցչութիւններում՝ ՀՀ դեսպանատանը Դամասկոսում եւ ՀՀ զխաւոր հիւպատոսութիւնում՝ Հալէպում: ՀՀ կառավարութեան մի այլ որոշմամբ՝ (Շար. 10-րդ էջում)

**ԻՐԱՆ ԲԱՆԱԿԱՆ ԾԱԲԱԹԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ**  
(Տեւ. 2-րդ էջում)

**«72» ճաշարան**  
رستوران ۷۲  
Տաք կերակրի մատակարարում՝ բնակարանում եւ աշխատավայրում:  
Հեռ. 88747990 - 91  
خ آبدان، خ نوبخت، اجنای کوجه ششم، شماره ۷۲

**ԱՐԱՍ սուրճ**  
قهوه آرام 88303478



Վիտալի Բալասանեան.

### «Յարկապէս, ցնցող էր, որ Ադիբէկեանն իրեն թոյլ է տալիս «ԼՂՀ-ի փոքր համայնք» ադրբեջանական ձեւակերպումը»

«panorama.am» - Արցախի նախագահական ընտրութիւններում նախագահութեան նախկին թեկնածու Վիտալի Բալասանեանը, որը ընտրութիւնների արդիւնքներով հաւաքել էր 22.967 ձայն, յուլիսի 27-ի իր ֆէյսբուքեան էջի միջոցով անդրադարձել է նախօրէին ասուխում սոցիոլոգ Ահարոն Ադիբէկեանի որոշ յայտարարութիւններին:



«Իր անկզբունքայնութեամբ եւ պատեղեկատուութեամբ մէկ անգամ եւս ինձ զարմացրեց Ահարոն Ադիբէկեանը: Մինչ քարոզարշաւը սկսելը՝ ես, Ստեփանակերտում պատահաբար հանդիպելով Ադիբէկեանին, խնդրել էի իրենից ազնիւ եւ ճիշտ մօտենալ Արցախին: Սակայն, այս մարդու մօտ նիւթապաշտութիւնը աւելի մեծ արժէք է, ինչն արտայայտեց արցախեան կուսակցութիւններից մէկի պատուէրով թւեր նկարելու եւ իմ մասին պատեղեկատուութիւն տարածելու տեսքով: Ինձ համար յատկապէս ցնցող էր, որ Ադիբէկեանն իրեն թոյլ է տալիս «ԼՂՀ-ի փոքր համայնք» ադրբեջանական ձեւակերպումը:

Միեւնոյն ժամանակ, ծիծաղելի են Ադիբէկեանի մօտեցումները՝ Արցախում ընդդիմութեան դերի վերաբերեալ: Դա աւելի շուտ յիշեցնում է աւտորիտար ռեժիմների փաստաբանների ծիծաղելի փաստարկները, ինչը խիստ վտանգաւոր է Արցախի ապագայի համար:


Արցախի ժողովուրդը միշտ էլ եղել է միաբան՝ Արցախի հարցի շուրջ եւ թէ՛ Աստուած մի արասցէ, պատերազմ սկսել, նորից նոյն ժողովուրդը միահամուռ ուժերով կը պաշտպանի իր երկիրը Արցախը համայնք տեսնել ցանկացողներին: Անընդունելի է, երբ այդ նոյն ժողովուրդի ճակատագրի մասին տարիներ շարունակ բանակցութիւններ են վարում եւ այդ նոյն ժողովուրդը անտեղեկ է դրան: Հէնց սրան հակազդելու համար է պէտք ընդդիմութիւնը կամ իշխանութիւնների այլընտրանքը: Արցախի ժողովուրդը այսօր եւ այսուհետեւ պէտք է լինի ըմբօստ՝ յանուն իր իրաւունքների պաշտպանութեան եւ արդիւնաւէտ պետութեան ստեղծման:

Մէջբերում իմ երկրից, որն Ադիբէկեանի կողմից ապակողմնորոշիչ մեկնաբանման էր արժանացել: «Ես խոստանում եմ ձեզ, որ ինչպէս եմ բոլորիդ նախագահը եւ որեւէ մէկին իր արած ընտրութեան կամ քաղաքական հայեացքների համար չի հետապնդւելու: Իմ առաջին քայլը ընտրութիւնների պատճառով թիմերի բաժանումը ժողովուրդին միաւորելը եւ արարիչ աշխատանքի մղելն է լինելու»:

Ինչ վերաբերում է պաշտպանութեան նախարարութեան արտագնայ կողմից նիստի արձանագրութիւններին, որոնց հրապարակումը, ըստ Ադիբէկեանի, ինձ ցմահ կը վարկաբեկէին, Ադիբէկեանին եւ նրան վճարողներին խնդրում եմ հրապարակել այդ արձանագրութիւնները: Եթէ ոչ, ապա Արցախի մասին ադրբեջանական մօտեցումները կիսող Ադիբէկեանին ստիպւած եմ խղճուկ գրպարտիչ համարելը», - գրել է Վիտալի Բալասանեանը:

Մասիս Մայիլեան.

### «Համանախագահները պէտք է վերանայեն իրենց հնացած մօտեցումները»



«news.am» - ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահները Լեւոնային Ղարաբաղում նախագահական ընտրութիւնների արդիւնքներով արւած յայտարարութեամբ կրկին ապահովագրեցին իրենց: «news.am»-ի թղթակցի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց ԼՂՀ-ի Անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան հարցերով հասարակական խորհրդի նախագահ Մասիս Մայիլեանը՝ մեկնաբանելով այն, որ համանախագահների յայտարարութեան մէջ ընդունալիս բառը չակերտի մէջ է վերցւած: Մայիլեանը զարմանք յայտնեց Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի նման խոշոր երկրների ներկայացուցիչների

աւելորդ գզուշտորութիւնից: Ինչ վերաբերում է այն կէտին, թէ համանախագահներն ընդունում են Լեւոնային Ղարաբաղի փաստացի իշխանութիւնների անհրաժեշտութիւնը՝ փորձել ժողովրդավարական եղանակով կազմակերպել բնակչութեան հանրային կեանքը նման միջոցառման միջոցով, Մայիլեանը միջնորդների եւ միջազգային այլ դերակատարների յայտարարութիւններում ԼՂՀ-ի ընտրութիւնների վերաբերեալ հանդուրժողականութիւն է նկատում:

«Եթէ նախկինում ԼՂՀ-ում ժողովրդավարական ընթացակարգերի անցկացումը դատապարտւում էր, ապա այսօր միջնորդներն ընդունում են ընտրութիւնների անցկացման անհրաժեշտութիւնը: Որքան շուտ համանախագահները հաշիւ նստեն իրողութիւնների հետ՝ այնքան արդիւնաւէտ կը լինի նրանց առաքելութեան իրականացումը: Իրականութիւնն այն է, որ ԼՂՀ-ի քաղաքացիները կառուցում եւ ամրապնդում են իրենց պետականութիւնը եւ մտադիր չեն հրաժարւել զարգացման ժողովրդավարական ուղուց, որն ընտրել են», - ընդգծեց գրողակցը:

Այս համատեքստում Մասիս Մայիլեանը յատկապէս նշեց ընտրութիւնների դերը՝ ԼՂՀ-ում ժողովրդավարութեան զարգացման տեսանկյունից: «ԼՂՀ-ում զարգացնելով ժողովրդավարութիւնը, մենք, անկասկած, նախադրեալներ ենք ստեղծում նրա անկախութեան միջազգայնորէն ճանաչման համար: Դա անհրաժեշտ է, բայց ոչ-բաւարար պայման է», - կարծում է նա:

Հէնց ԼՂՀ-ի միջազգայնորէն ճանաչումը, ըստ նրա, կարող է փակել հակամարտութեան կարգաւորման ռազմական հեռանկարը եւ հաւասար պայմաններ ստեղծել կարգաւորման կարեւոր խնդիրների քննարկման համար:

### Գերմանացի քաղաքացիական ակտիւիստը խնդրում է ստորագրել Հայոց Յեղասպանութեան մասին իր բողոքի դիմումի փակ

«news.am» - Գերմանացի քաղաքացիական ակտիւիստ Ենա Մ. -ն խնդրում է ստորագրել Գերմանիայում Հայոց Յեղասպանութեան ճանաչման մասին իր բողոքի դիմումի տակ, որը տեղադրւած է avaaaz.org՝ քաղաքացիական յայտարարութիւնների միջազգային բաց հարթակի կայքում:

«Քաղաքացիներին ուղղւած 2012 թ. յուլիսի 3-ի իր դիմումում Գերմանիայի կանցլեր Անգելլա Մերկելը յայտարարել էր այն մասին, որ հայերի եւ արամէացիների ցեղասպանութեան մասին օրինագիծն աջակցութիւն չի ստանայ, քանի որ 1915-16 թթ. «իրազարձութիւնները» Հայաստանի եւ Թուրքիայի ներքին գործն են: Նման յայտարարութիւնը 2005 թ. Բուենոսթայի որոշումից յետոյ թաքցնել էր, որով միաձայն ընդունւել էր այդ իրազարձութիւններում Գերմանական կայսրութեան դերը:

Ինչպէս է Գերմանիայի համար կարեւոր ճանաչել ցեղասպանութիւնը: Ի՞նչ ընդհանուր բան կայ դրա հետ: Գերմանիան միւսներից աւելի լաւ գիտի, թէ ցեղասպանութիւնը ինչպիսի հետեւանքներ կարող է ունենալ գոհերի եւ յանցագործների համար: Աւելի վատ է, երբ Յեղասպանութեան գոհերը տասնամեակներ շարունակ հրապարակաւ մերժւում են, իսկ գոհերին «խաբեբաներ» են համարում: Յեղասպանութեան ժխտումը դրա շարունակութիւնն է: Յանցագործութիւնն աւարտւում է միայն այն ժամանակ, երբ մեղաւորն ընդունում է այն:

Առաջին համաշխարհային ընթացքում երիտթուրքերի կառավարութիւնը սխտեմատիկաբար ոչնչացրել է հայերին եւ քրիստոնէայ միւս ժողովուրդներին: Դա անվիճելի փաստ է: Գերմանական կայսրութեան մասնակցութիւնը ցեղասպանութեանն ապացուցւած փաստ է. գերմանացի զինուորականները պատասխանատու են այդ ջարդերի համար:

Գերմանացի շուրջ 800 սպանուել են եղել թուրքական բանակի կազմում՝ գտնւելով նրա հրամանատարութեան ներքոյ: Գերմանացի սպաները ստորագրել են տեղահանումների մասին կարգադրութիւնները: Նրանց թուում է եղել աւազ-յստենանտ Սիլւեսթր Բեարիլը, ով ստորագրել է հազարաւոր հայերի տեղահանման եւ ոչնչացման մասին կարգադրութիւնները, պրուսացի գեներալ-մայոր Ֆրիդրիխ Բրոնսարտ Ֆոն Շեյնեդորֆը, պրուսացի գեներալ Կոլմար Ֆայեր Ֆոն Գոյցը, գնդապետ Օտտո Ֆոն Ֆելդմանը, որի խորհրդով որոշակի տարածք ազատագրւել է հայերից:

Գերմանիան նաեւ ամէն ինչ է արել է՝ Հայոց Յեղասպանութեան մասին որեւէ հողորդագրութիւն խլացնելու համար: Գերմանացի ռազմական լրագրողներին արգելւել էր շօշափել Հայկական Հարցը: Հիմա արդէն այդ մասին հնարաւոր է ազատ արտայայտւել որեւէ ձեւով: Գերմանիայում թուրքական համայնքը կարող է ազդել գերմանական դպրոցների ուսումնական ծրագրի վրայ: 2005 թ. հունիսին Բրանդելբուրգի դպրոցների դասադրքերից հանւեց Հայոց Յեղասպանութեան մասին յիշատակումը՝ թուրք դիւանագէտների կատարի բողոքի արդիւնքում: Սակայն, այսօր Բրանդելբուրգը միակ դաշնային նահանգն է, որ պատմում է Օսմանեան կայսրութիւնում հայերի զանգւածային սպանութիւնների մասին: Գերմանիայի մնացած մասում, հաշի առնելով «յանցագործների ժառանգները» կարծիքը, «գերմանական» պատմութեան այս մասը լուրթեան է մատնւում:

Այդ իսկ պատճառով մենք բողոքով դիմում ենք Գերմանիայի խորհրդարանին՝ պահանջելով, որ Գերմանիան ճանաչի իր պատասխանատուութիւնը Յեղասպանութեան համար: Ես կոչ եմ անում Բուենոսթայից, որը դատապարտել է Հոլոկոստը, կրկին օրինակ ծառայել եւ դատապարտել Հայոց Յեղասպանութիւնը:

(Շար. 7-րդ էջում)



Գ. Ս.

Շարժման կիզը հետաքրքիր սենսացիաներով նշանաւորւեց միանգամայն ՁԼՄ-ներում յայտնւեցին 2013 թվականի դարնան նախագահական ընտրութիւնների հաւանական թեկնածուների անուններ, որոնցից մի քանիսը, սակայն, միանշանակ չհաստատեցին լրատուութիւնը: Կարեւորագոյնները այդ անուններից կարելի է յիշատակել 3 յաջորդական շրջանների ԱԳ նախարարների, որոնք յաջորդաբար այդ հանգամանքն էին զբաղեցնում Ռոմֆասանյանի, Սաթմախի եւ ներկայիս նախագահ Ահմադինեթաղի նախագահութեան օրօք: Նրանք են՝ Ալիաբաբա Վելայաթին (այժմ հոգեւոր առաջնորդի խորհրդական՝ արտաքին քաղաքականութեան եւ միջազգային յարաբերութիւններում), Քեամալ Սաւազին, որն ներկայումս զբաղւած է Արտաքին յարաբերութիւնների ստրատեգիական խորհրդի գործունէութեամբ եւ ապա՝ ներկայումս ԱԳ նախարար Սաթմախի, որը թեկնածուութեան հարցին ի պատասխան յայտնել է թէ՛ նախագահութիւնն արժանիքներ է պահանջում, որոնք ես չունեմ... իսկ Սաւազին յատկապէս հերքել է իր թեկնածուութեան մասին լրատուութիւնը: Պրն. Վելայաթին, սակայն, խնդիր համարել է վաղաժամ: Հետաքրքիր է նաեւ նախագահ Ահմադինեթաղի առաջին արտգործնախարար Մոթթաթի թեկնածուութեան մասին լուրերի շրջանաւորում, որոնք, ինչպէս նախկինների, դեռեւս յստակ պատասխանի են կարօտ: Այլ անուններ ու ճանաչւած դէմքերն են՝ վերջին մի քանի շրջանի չյաջողած թեկնածու, Իսլ. յեղ. Պահապանների կորպուսի նախկին հրամանատար դոկտ. Մոհսէն Ռեզային, որն էլ Վելայաթու պէս՝ յստակ պատասխանը կը տայ, երբ զայ ժամանակը: Իրանի ատոմական շարժիչ կառուցման թղթածրարի գլխաւոր բանագնաց (նախագահ Սաթմախի ժամանակաշրջանում) Հասան Ռոհանիի անունը եւս ամէն անգամայն նման կրկին հրապարակւում է, բայց իր պատասխանը լրագրողին ընդամենը մէկ բառ էր՝ ոչ...: Ինչու ոչ, նաեւ ցանկը համալրելու համար՝ կարելի է յիշել երկու անուն եւս՝ Մուստաֆա Փուրմոհամադի, որն Ահմադինեթաղի առաջին շրջանի կարիքների ՆԳ նախարարն էր ու որպէս այդպիսին՝ առաջինը, որ նախագահին հակադրւելով՝ հրաժարւեց, այժմ նա զբաղեցնում է երկրի վերահսկողական պալատի ընդհանուր ղեկավարի պաշտօնը, որը, սակայն, իր թեկնածուութեան մասին լուրերը հերքել է: Սոսակցութիւններ կան նաեւ խորհրդարանական դիւանական ընտրութիւններում իսկ պարտւած Հազգադ Ադէլի թեկնածուութեան մասին, բայցեւայնպէս՝ դա այն շարքից է, որ լուրջ չի ընկաւում քաղաքական շրջանակների կողմից:

Երկու հեղինակաւոր դէմքեր էլ կան՝ Ալի Լարիջանի (մեջլիսի խօսնակ) եւ Մոհամադ Բադեր Ղալիբաֆ (Թեհրանի քաղաքապետ): Առաջին դէպքում ասուում է թէ՛ ինքը շատ լուրջ չի վերաբերւում եւ այդ առթիւ ցայժմ ոչ մի որոշում չի կայացրել: Իսկ դոկտ. Ղալիբաֆը, որի ոչակ հնարաւորութիւնների մասին դեռ վաղուց են հետաքրքրւած տարբեր շրջանակներ, թուում է թէ՛ «սոնաժապին» գործընթացում է գտնւում, այն առումով, որ անընդհատ ուղղակի թէ՛ անուղղակի՝ փորձում է շօշափել հասարակական ու քաղաքական շրջանակների տրամադրւածութիւնն ու ապա՝ ըստ իրեն՝ ժամանակին ներկայացնի թեկնածուութեան յայտը...:

11-րդ շրջանի նախագահական ընտրութիւնների առթիւ վերջերս շատ են բարձրաձայնում նախորդ բարեկարգչական վարչախմբի ներկայացուցիչները: Նրանք, սակայն, խոստովանելով հանդերձ կազմակերպչական առգոյ տկարութիւնների մասին, միաժամանակ յայտարարում են, որ ժամանակին պէտք է համախմբւեն եւ ի մի գան միասնական (բարեկարգչական ճամբարների կողմից) մի թեկնածուի շուրջ եւ ակտիւօրէն մասնակցեն ընտրութիւններին: Սպասենք ու տեսնենք, քանզի այն, ինչ պարզ է, նախագահական խմբորդ եւ շատ է ջուր տանելու... \* \* \*

Արտաքին քաղաքականութեան ոլորտում իրանական դիւանագիտական կարողականութիւնները վերջին ժամանակաշրջանում, ինչ խօսք, ուղղորդւում են սիրիական ճգնաժամում ինքնուրոյն դիրքորոշումներով հանդէս գալով: Ահա-հա-հա, օրեր առաջ էր, որ պաշտօնական Թեհրանը հիւրընկալեց Սիրիայի ԱԳ նախարար Նոյնինը Վալիդ Մուսլլեմին ի դէմս իր գործընկեր Սաթմախի: Վերջինս էլ տեսակցութիւնից լետոյ Արեւմուտքին ու մասնաւորապէս տարածաշրջանի մի շարք միջամուկ երկրների յորդորեց, որպէսզի «խելամիտ քայլերով քաղաքական-խաղաղ լուծման ելքեր փնտրեն սիրիական թնձուկի լուծման ուղղութեամբ, այլապէս՝ նոյն տարածաշրջանի խաղաղութիւնն ու անվտանգութիւնն է խաթարւելու»:

Պրն. Սաթմախի, սակայն, նախանցեալ օրն իսկ Թեհրանում ընդունելով Թուրքիայի միջինարեւելեան հարցերով փոխարտգործնախարար Սաթմախի վերջին փոխանցեց. «Եթէ ենթադրւում է, թէ Սիրիայի իշխանութիւնը պէտք է տապալւի, դա երբեւէ արդարացուցիչ չէ...»:



ՊԱՏԳԱՍ

Սերժ Սարգսեանի ելոյթը՝ Լոնդոնում.

«Ասել եմ ու այսօր դարձեալ կրկնում եմ՝ եկէ՛ք Հայրենիք, ներդրումներ կապարէ՛ք»

«panorama.am» - Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը յուլիսի 28-ի երեկոյեան մասնակցել է անգլիական համայնքային եւ եկեղեցական խորհրդի կողմից կազմակերպուած ընդունելութեանը, որտեղ հանդէս է եկել ելոյթով: Ներկայացնում ենք ելոյթը՝ ամբողջութեամբ.



«Յարգելի՛ տիկնայք եւ պարոնայք,

Սիրելի՛ հայրենակիցներ, Անչափ ուրախ եմ՝ նման ջերմ միջնորդութեամբ ողջունելու Անգլիայի հայ համայնքի ներկայացուցիչներին: Կարծում եմ՝ չափազանց հաճելի եւ օգտակար է, որ մենք կարողացանք այսօր հանդիպել, գրուցել իրար հետ, կարծիքներ փոխանակել այս ջերմ միջնորդութեամբ:

Աշխարհասփիւռ հայութեան իւրաքանչիւր ներկայացուցիչ մեր ազգային միասնութեան կերտողն է: Ձեզանից իւրաքանչիւրը մեր ընդհանուր ազգային ապագայի սերմնացանն է՝ առանց չափազանցութեան: Մենք հզօրանալու ենք մեր համախորմբաժնութեամբ, մեր միասնութեամբ, համազգային խնդիրների լուծման մեր հաստատակամութեամբ՝ յաղթահարելով մեր առջեւ ծառայած բոլոր մարտահրաւէրները: Պարգապէս, պէտք է կոփենք մեր կամքը, հաւատանք ինքներս մեզ եւ գործենք վճռականորէն:

Հայաստանը եւ Սփիւռքը ուժեղ են միայն իրար հետ ուսուսուս: Մենք Հայաստանում մեզ աւելի զօրեղ ենք գտնում՝ գիտակցելով մեր Սփիւռքի ուժը: Վստահ եմ, որ նոյն կերպ էլ դուք էք գտնում Հայաստանի Հանրապետութեան ներկայութիւնը:

Ձեր կազմակերպած ու հետեւողական համայնքը մեր կողքին է եղել 20-ամեայ անկախ Հանրապետութեան բոլոր օրհասական պահերին: Արքայազան գոյամարտի, երկրաշարժի, արհաւիրքների ու դժարութիւնների պահերին դուք զօրավիզ եղաք եւ անկասկածաբար Հայաստանին: Դուք նպաստեցիք նրա կայացմանը, անկասկածաբար երկրի տնտեսական-քաղաքական առաջընթացին: Այսօր էլ բազում հայրերին սատար են կանգնում Հայրենիքին՝ իրենց գիտելիքով ու կարողութիւններով, գաղափարներով եւ ֆինանսական ներդրումներով:

Հայ-անգլիական բարեկամութիւնը դարերի պատմութիւն ունի: Դեռ Կրիլիկայի հայ արքայներ ջերմ բարեկամական յարաբերութիւն ունէին Անգլիայի թագաւորների հետ: Նրանք անգամ խաղաղարար առաքելութիւն են իրականացրել Ֆրանսիայի եւ Անգլիայի միջեւ: Իսկ դրանից մի քանի դար յետոյ, Հնդկաստանում անգլիական առեւտրական ընկերութիւններին հայ վաճառականների մատուցած ծառայութիւնները բարձր գնահատելով, թագաւորական հրովարտակով նրանց շնորհակէտ էր «Անգլիայի ազատ քաղաքացիներ»-ի կարգավիճակ:

Ձեր համայնքը այդ փառահեղ պատմութեան իրաւատէրն է: Մենք երախտագարտ ենք այն բոլոր նւիրեալներին, որոնց անխնայ գործունէութեան, յամառ ջանքերի շնորհիւ՝ այս՝ համեմատաբար փոքր համայնքում, գործում են բազմաթիւ հայկական կազմակերպութիւններ եւ կառույցներ, եկեղեցիներ ու կրթօջախներ, երիտասարդական ու մարզական, բարեգործական եւ կանանց միութիւններ, հայագիտական կենտրոններ: Հայկական իստորաբանութեամբ ու անգլիական հետեւողականութեամբ դուք պահպանում եւ զարգացնում էք համայնքը, ձեռք մեկնում Արցախին ու Հայաստանին: Գիտութեան, մշակույթի, առողջապահութեան եւ այլ ոլորտներում բազմաթիւ հայ անհատներ հասել են բացառիկ բարձունքների՝ չմոռանալով իրենց հայկական արմատները՝ բարձր պահելով ազգի պատիւը:

Յարգելի՛ ներկաներ,

Մենք անկարող ենք մոռանալ հայութեան մորմուքը: Կարծում եմ՝ ձեր համայնքը մեծ ներուժ ունի, որի լիարժէք եւ արդիւնաւէտ օգտագործումը հնարաւորութիւն կը տայ արձանագրել նոր յաջողութիւններ՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման, հայ-անգլիական յարաբերութիւնների զարգացման, համազգային հիմնախնդիրների լուծման ճանապարհին: Մենք շարունակելու ենք մեր միասնական գործողութիւնները՝ Ցեղասպանութեան միջազգայնորէն ճանաչման ուղղութեամբ: Վստահ եմ, որ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցն այս առումով լինելու է շրջադարձային:

Անգլիայի համայնքն ունի միասնաբար եւ յամառօրէն դժարութիւնները յաղթահարելու մեծ փորձ եւ հմտութիւններ: Վստահ եմ, որ շարունակելով ու զարգացնելով հայրերի ու պապերի լաւագոյն ավանդույթները՝ նոր սերունդը գիտակցելու է, որ նաեւ իր ուսերին է դրւած Հայրենիքը զօրացնելու եւ համազգային հիմնախնդիրները լուծելու ծանր բեռը:

Մենք պէտք է կարողանանք համաքայլ ընթանալ ժամանակի հետ եւ կարողանանք ներկայում կերտել մեր սերունդների հայկական ապագան: Իսկ այդ ապագայում Սփիւռքը եւ Հայրենիքը միասնական են՝ մէկ հողի ու մէկ մարմին:

(Շար. 8-րդ էջում)

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ժ. Ռէխեսան.

«Սիրիայի իշխանութիւնը կացութեան փերը լինելու ընթացքի մէջ է»

Սիրիայի հայ համայնքի վիճակը, տրամադրութիւններն ու սպասելիքները՝ համայն հայութիւնից եւ Հայաստանից. «yerkir.am»-ի հարցազրոյցը Սիրիայի հայոց ազգային առաջնորդարանի խօսնակ Ժիրայր Ռէխեսանի հետ:

Հ.-Պրն. Ռէխեսան, ինչպիսի՞ վիճակ է այսօր Սիրիայում, յատկապէս՝ Հալէպում: Այժմ Հալէպում իրավիճակն աւելի հանգի՞ստ է:

Պ.-Շրջաններում բախումները տակաւին շարունակուած են, բայց քաղաքը դեռեւս ստուած՝ գրեթէ անդամալոյծ վիճակում է: Յատկապէս, վառելանիւթի պակասի պատճառով՝ երթեւեկութիւնն էլ է նւազ: Սպասողական վիճակը դեռ աւարտուած չէ: Մի շարք շրջաններում հրաձգութիւնը եւ հրետանային զարկերը դեռեւս շարունակուած են: Մեծ թւով գաղթականները տեղաւորուած են դպրոցներում եւ այլն: Հսկողութիւնն ամէն տեղ է: Մեր շրջաններում, ալիքն ալիքով մարմինները շարունակուած են իրենց հսկողութիւնը՝ ուշիւշով հետեւում են իրադարձութիւններին: Մեզ մօտ արդէն յատուկ մարմին է ստեղծւել՝ հոգեւոր առաջնորդարանի, ազգային կառույցների կողմից, եւ բոլոր նրանց, ոչ միայն հայերին, ովքեր օժանդակութեան կարիք են ունենում, փորձում ենք անհրաժեշտ օժանդակութիւն ցուցաբերել: Այս աշխատանքներն ընթացքի մէջ են:



այս վերաբերմունքին, եւ արդեօք ի՞նչ սպասելիքներ կան ակնկալիքներ ունէք Հայրենիքից:

Պ.-Նախ՝ առանց այս դէպքերի էլ որեւէ մարդ, բնականաբար, իր հայեացքը յառած է լինում իր հայրենիքին՝ իր հեռավոր նպատակներում անպայմանօրէն ունի դէպի մեր երկիր վերադարձի երազանքը: Բայց, մեր այսօրւայ պայմաններով, այս դժարին վիճակում, կարծում եմ՝ եթէ որեւէ այլ անբնական կացութիւն չստեղծւի, Հայաստան գալու եւ հաստատուելու տրամադրութիւն ուղղակիօրէն չկայ: Մեր թընդմերթ կան, բնականաբար, աւելի լաւ պայմաններում ապրելու ցանկութիւն ունեցող մարդիկ, ովքեր ուզում են գաղթել: Նրանցից շատերը, բնականաբար, մտածում են նաեւ Հայրենիքի մասին: Բայց կարծում եմ՝ այսօր Հայրենիքում հաստատուելն արդէն այնքան դժար է լինի աշխատանք, գործ գտնելու առումով, լինի կացութեան պայմանների ապահովման առումով եւ յատկապէս ներկայ իրավիճակում, երբ Սիրիայում դրամի անկում կայ, երբ տնտեսական լուրջ դժարութիւններ կան՝ այս բոլորը այդ պատկերացումները միայն ցանկութեան սահմանում են պահում: Իսկ եթէ բնականօրէն Հայաստանում իշխանութիւնները, որպէս արտակարգ վիճակ, յատուկ կարգադրութիւններ անեն, յատկապէս՝ սիրիականութեան համար, չեմ ասում անվճար, բայց գոնէ յարմար պայմաններով տներ կամ տուն ունենալու հնարաւորութիւն ստեղծեն, բնականաբար, այդ ժամանակ պատկերը լրիւ կը փոխւի, եւ մարդիկ արդէն կարող են մտածել Հայաստան գալու-հաստատուելու կամ իրենց մտքերում ունեցած երազները գործնականացնելու մասին:

Հ.-Համաշխարհային մամուլին հետեւելիս՝ տեսնում ենք, որ միայն ռուսական լրատւամիջոցներն են, որ հաղորդում են, թէ պետական զօրքն ինչպէս է ընդդիմութեամբ հակահարած տալիս, լռեցնում կամ մաքրում: Կարողացա՞նք կառավարական զօրքերը գոնէ ինչ-որ չափով Հալէպում վերահսկել իրադրութիւնը:

Պ.- Հիմա այդ բոլորը յարաբերական է, որովհետեւ թաղամասեր կան, ուր ընդդիմադիրներ էին թափանցել եւ որոշակի չափով իշխանութիւն ստեղծել՝ յանցախուժք: Այդ թաղամասերից, օրինակ, Սալահդինը, որի մասին շատ էր խօսուում, բնակչութիւնից դատարկուած է: Բաւական մեծ թաղամաս է, եւ բնակչութիւնն ամբողջութեամբ հանրակացարաններում, մզկիթներում, դպրոցներում է տեղաւորւել, որպէսզի բնականաբար հանդիստ կերպով կատարի իր վրայ դրւած պարտականութիւնը, կամ ասենք՝ ընդդիմութեան տարրերի դէմ իր մաքրագործման աշխատանքները կատարի: Դա է այժմ տեղի ունենում: Այսինքն՝ հրաձգութիւնը մինչ այժմ էլ շարունակուած է: Հէնց հիմա էլ լուծում են դրանց ձայները: Բայց ճշգրիտ՝ թէ ինչ վնասներ կան, այժմ հնարաւոր չէ ճշտել:

Հ.-Դուք սասցիք, որ մեր առաջնորդարանը, ազգային կառույցները օգնութեան եւ հայկական քաղաքացիներին վերահսկողութիւն իրականացնելու միջոցներ են ձեռնարկել, բայց հալէպահայութեան վիճակն այս պահի դրութեամբ ինչպիսի՞ն է: Կարողանո՞ւմ էք, արդեօք, ամբողջութեամբ վերահսկել իրավիճակը:

Պ.- Մեր տեղի հաստատութիւնների, կառույցների երիտասարդները, պատասխանատու մարմինները հսկողութիւն են իրականացնում, որպէսզի որեւէ մարդու որեւէ անակնկալ չսպառնայ: Մեր երիտասարդները վերաբացւեն, կառավարանայ գալի կուտակուած աղբի դէզներն իրենք են մաքրում, որովհետեւ չուրջ մէկ շաբաթ է՝ արբահաւաք էլ չի կատարուում: Բնականաբար, այս շոգին կարող են տարբեր վարակներ էլ տարածւել: Այնպէս որ՝ լինի օգնութեան առումով, լինի հսկողութեան առումով, մեր երիտասարդութիւնն ու մեր տղաները ինչ-որ պէտք է՝ կատարում են: Անշուշտ, բոլոր կառույցները, ազգային բոլոր հաստատութիւնները նոյն վիճակում են: Եւ ուղղակիօրէն քանի դեռ թիրախ չենք, կարծում ենք, որ կացութիւնը մեր հսկողութեան տակ էլ մեծ ժողովրդի ապահովութեան եւ բնականօրէն կեանքը շարունակելու առումով: Բայց, խանութներն ընդհանրապէս փակ են, երթեւեկութիւնը շատ-շատ է նւազել՝ գրեթէ իւրաքանչիւր մարդ տանը կամ իր տեղում է մնում: Սա է իրավիճակը:

Հ.-Պրն. Ռէխեսան, վերջին օրերում լուրեր տարածեցին, թէ Հայաստանում Սիրիայի դեսպանութեան աշխատակիցներին մէկը իրաւապահական է ներկայացրել եւ միացել ընդդիմութեանը: Ինչպիսի՞ արձագանգ կայ այդտեղ այս կապակցութեամբ:

Պ.- Միայն Հայաստանից սպրդած նման լուր լսեցինք, բայց պաշտօնական ոչ մի կողմից այդպիսի լուր չի ստացւել, պաշտօնական ոչ մի յայտարարութիւն չի կատարւել: Ենթադրում եմ, որ եթէ իրականութիւն լինէր, ապա գոնէ ինքը մինչեւ այսօր կը յայտարարեր, որ ինքն անջատողական է, եւ կամ միւս կողմերից որեւէ մէկը պէտք է յայտարարած լինէր այդ մասին: Ոչ մի պաշտօնական յայտարարութիւն չի եղել:

Հ.- Հայաստանում մեծ մտահոգութիւն կայ՝ կապուած սիրիահայութեան վիճակի հետ, եւ շարժումներ են սկսում օգնելու սիրիահայութեանը: Երիտասարդներն անհանգստացած են, խմբեր են ձեւաւորում, ուզում են դրամահաւաքներ կազմակերպել, պատրաստակամութիւն են յայտնում սիրիահայութեանը իրենց տներում պահելու եւ այլն: Ինչպէ՞ք էք նայում

դուք եմ՝ եթէ որեւէ այլ անբնական կացութիւն չստեղծւի, Հայաստան գալու եւ հաստատուելու տրամադրութիւն ուղղակիօրէն չկայ: Մեր թընդմերթ կան, բնականաբար, աւելի լաւ պայմաններում ապրելու ցանկութիւն ունեցող մարդիկ, ովքեր ուզում են գաղթել: Նրանցից շատերը, բնականաբար, մտածում են նաեւ Հայրենիքի մասին: Բայց կարծում եմ՝ այսօր Հայրենիքում հաստատուելն արդէն այնքան դժար է լինի աշխատանք, գործ գտնելու առումով, լինի կացութեան պայմանների ապահովման առումով եւ յատկապէս ներկայ իրավիճակում, երբ Սիրիայում դրամի անկում կայ, երբ տնտեսական լուրջ դժարութիւններ կան՝ այս բոլորը այդ պատկերացումները միայն ցանկութեան սահմանում են պահում: Իսկ եթէ բնականօրէն Հայաստանում իշխանութիւնները, որպէս արտակարգ վիճակ, յատուկ կարգադրութիւններ անեն, յատկապէս՝ սիրիականութեան համար, չեմ ասում անվճար, բայց գոնէ յարմար պայմաններով տներ կամ տուն ունենալու հնարաւորութիւն ստեղծեն, բնականաբար, այդ ժամանակ պատկերը լրիւ կը փոխւի, եւ մարդիկ արդէն կարող են մտածել Հայաստան գալու-հաստատուելու կամ իրենց մտքերում ունեցած երազները գործնականացնելու մասին:

Հ.-Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա կաթողիկոսը կոչ է արել, որ հայկական գաղթօջախները աստար կանգնեն սիրիայից համայնքին: Հայաստանից ի՞նչ օգնութիւն էք ակնկալում:

Պ.- Վեհափառ Հայրապետը դէպքերի հէնց առաջին օրերից մանրամասնօրէն ամէն օր հետեւում էր կացութեանը, զարգացումներին: Եւ երբ արդէն պայմանները դժարացան, նոյնիսկ ինքն անձամբ ցանկացաւ գալ եւ իրախուսել ժողովրդին: Սակայն, բնականաբար, այս վիճակում՝ երթեւեկութեան եւ ճամբորդութեան դժարութիւնները հաշի առնելով, ազգային իշխանութիւնը համաձայն չեղաւ այդ ցանկութեան հետ: Վեհափառ Հայրապետը մեր ներկայ տնտեսական դժարութիւնների համար այդ կոչն ուղղեց, եւ այդ կոչը, անշուշտ, համայն հայութեանն էր ուղղւած: Այդ հայութիւնը բաւ մէջ մտնում են նաեւ մեր հայրենիքի հայրենակիցները, այնպէս որ՝ ես չեմ ուզում Հայաստանի հայութեանը տարանջատել համայն հայութիւնից: Մեզ համար հայութիւնը մէկ ամբողջութիւն է, եւ, բնականաբար, այսօր այդ օժանդակութեան կարիքը զգացւում է: Մանաւանդ՝ տնտեսական, նւիրական բազմազան դժարութիւնների առկայութեան պարագայում: Ցատկապէս, վերջ-միւս օրը, երբ դպրոցները վերաբացւեն, կառավարանայ գալի կուտակւած կարիք: Իսկ դեռ անորոշ են առաջիկայ գալիք օրերի այլ դժարութիւնները, որ մեր դէմ պէտք է ծագեն: Այնպէս որ՝ չեմ կարող այժմ ճշտել, թէ ինչ կարելի է Հայրենիքից սպասել, բայց եթէ Հայրենիքն իր հերթին պետականօրէն մեզ գոնէ որոշ դիւրութիւնների հնարաւորութիւններ ստեղծի, ինչպէս այսօր երկիրը դեպպանատներից կամ հիւպատոսարաններից քաղաքացիութիւն ստանալու դիւրութիւնը հրապարակեց, նաեւ յարմար ձեւով բնակութեան, տներ ունենալու եւ կամ գործի հնարաւորութիւններ ստեղծւեն, բնականաբար, մարդկանց մօտեցումները կը փոխւեն:

Հ.-Հէ պաշտօնական ներկայացուցչութիւնն այդտեղ ինչ-որ՞ի է գրաւում, արդեօք համայնքի կողքին՞ն է եւ, առհասարակ, ի՞նչ գործունէութիւն է ծախալում:

Պ.- Հայաստանի պաշտօնական պատասխանատու կողմերը միշտ էլ յայտարարել են, որ համայնքի կողքին են, համայնքին բոլոր կարիքներում օգնելու պատրաստ են: Բայց, մենք երեւի դեռ այդ օգնութեան կարիք ունենալու վիճակի մէջ չենք մտել: Սակայն, այս բոլորից բացի՝ ես ուզում եմ ասել, որ սիրիահայութիւնը մինչեւ վերջ կտռւած կը մնայ իր պատմական գաղթօջախից, ամբօրէն կը պահի իր այս պատմական գաղթօջախի անհահանջ երթը շարունակելու ճգնաժամը: Այսինքն՝ համայնքը դատարկելու, վերանալու, լուծարելու ոչ մի վտանգ կամ սպառնալիք չկայ:

Հ.- Կուզէիք նաեւ իմանալ, թէ Դուք որքանով էք տեղեակ Հալէպից դուրս գտնող մեր համայնքների՝ Սիրիայի այլ տարածքներում բնակւող մեր հայրենակիցների վիճակի մասին:

Պ.- Շատ տարբեր չէ: Բնականաբար, կան աւելի փոքր թւով հայութիւն ունեցող քաղաքներ, ինչպէս՝ Լաթաքիան: Այնտեղ այսօր յարաբերականօրէն աւելի հանգաւոր է եւ կայուն: Սակայն, հայերի վիճակը գրեթէ նոյնն է, որովհետեւ ամիսներ (Շար. 7-րդ էջում)











### Ս.Թադէի վանքի....

(Շար. 5-րդ էջից)

Այդ փուլին հասնելու համար՝ անհրաժեշտ է մասնագետների կողմից մի նախագիծ մշակել: Եթէ կարողանանք այդ փուլին հասնել, կրփորձենք կարելու հիմնարկներից եւս ֆինանսապէս հովանավորութիւն ձեռք բերել: Մենք պատրաստ ենք նեցուկ հանդիսանալ Շերլի Աւետեանի ղեկավարած գրասենեակին եւ վերահաստատել 1978 թվականին Իրանի ու Իտալիայի միջեւ ստորագրուած վերանորոգումների փաստաթուղթը, որը մեր կենտրոնի նախաձեռնութիւնն էր: 1975-78 թվականներին մեր կենտրոնի նախաձեռնութեամբ մի քանի անգամ չափազուրկ են Ատրպատական նահանգի պատմական յուշարձանները: Յուշանք, որ նման կառուցողական աշխատանքները շարունակեն:

Պրն. Լուուեանը կարեւորութեամբ անդրադարձաւ իր պատկան կենտրոնի եւ Հայաստանի միջեւ ընդլայնւող համագործակցութեան մասին՝ նշելով, որ «Շատ կարեւոր հանգամանք է, որ մեր կենտրոնը այսօր վայելում է Հայաստանի իշխանութիւնների հովանավորութիւնը: Մի գուցէ Սփիւռքում միակ կենտրոնն է, որ նմանօրինակ օժանդակութիւն է ստանում եւ Հայաստանի պետական չորս կարեւոր կառույցները՝ հանր. նախագահութիւնը, Սահմանադրական դատարանի նախագահութիւնը, արտգործնախարարութիւնը եւ մշակութիւն նախարարութիւնները մեր Հողաբարձուների խորհրդի անդամ են: Մեր կենտրոնը միջազգային կառույց դարձնելու ընթացք է տարւում, բայց իտալական կամ եւրոպական մասնակցութեան կողքին գրեթէ հայկական մասնակցութիւն չկար: Այսօր փաստ է, որ հինգ տարի է՝ մենք ունենք նաեւ հայ պետական կառույցների մասնակցութիւնը, որու կողքին երկու տարուց ի վեր աւելացաւ «Համագագային» մշակութային միութեան կենտրոնական վարչութեան մասնակցութիւնը: Պէտք է ջանանք աւելի օժանդակութիւններ ընդգրկել, յատկապէս որ վենետիկի հայ իրականութեան պատմական ներկայութեան նշանակութիւնը շատ մեծ է վենետիկի համար: Վենետիկի դերը որպէս մշակութի միջազգային մայրաքաղաք՝ շատ կարեւոր է, բայց հայութեան թիւը այդտեղ բաւականին նւազել է, որպէսզի




կարողանանք այդ կարեւոր իրականութիւնը փրկել իր Միլիթարեան միաբանութեամբ, իր «Մուրադ Ռաֆայէլեան»-ով ու ունեցած կալւածներով եւ մանաւանդ պատմական նշանակութեան համար նաեւ որպէս ապրող իրականութիւն՝ ճիշտ է, որ Սփիւռքի բոլոր կառույցները կամ անհատները Հայաստանի հետ օժանդակ են մեր գործունէութեանը, որի ամբողջ նպատակըն է ոչ միայն հայկական գործունէութիւն ծաւալել, այլեւ համեմատական եւ ուրիշների մասնակցութեամբ այլ նախաձեռնութիւններ կատարել, որոնց մէջ հայկականը միայն մէկ մասնիկն է, բայց դա օտարների կողմից իր իւրապատուկ տեսանկյունից ունի եւ այդ աշխատանքի արդիւնքն է այս մասնագէտների ներկայութիւնը»:

Վերջում նշեմ, որ իրապէս շատ սպաւորւած եմ Իրան կատարած այցից:

### «Խիստ տպաւորիչ էր վանքի ուխտագնացութիւնը»

Հոռոմ քաղաքում բնակւող եւ պատմական կոթողների վերանորոգման ու ճարտարապետութեան դոկտորական ունեցող Վահէ Վարդանեանը այն ճարտարապետն է, որ կամուրջ հանդիսացաւ հայ եւ իտալացի ճարտարապետների եւ իրանական կողմի կապերի ամրապնդման առումով:



Ճարտ. Վահէ Վարդանեանը իրանահայ լինելով՝ ծնւել է Թուրքում, բայց երկար տարիներ է, ինչ բնակութիւն է հաստատել Իտալիայի Հոռոմ քաղաքում եւ մասնագիտութեամբ ճարտարապետ է: Նա տնօրէնն է Իտալիայում գործող «Ջատիկ» կոչւող կենտրոնի, որը Հայաստան-Իտալիա բարեկամական միութիւնն է եւ հիմնադրւել է 1998 թվականին, Իտալիայում Հայաստանի առաջին դեսպան Գագիկ Բաղդասարեանի, մի խումբ իտալացիների եւ Վահէ Վարդանեանի միջոցով: Վահէ Վարդանեանը Իտալիայում հայկական կենտրոն հիմնադրելու հարցով ասաց. «Ես ժամանակին խիստ ազդեցութիւն կրեցի ճարտարապետ Հերման Վահրամեանի եւ այլ հայերի Իտալիայում ծաւալած աշխատանքներից: Այդ ժամանակ Մինաս Լուուեանը արդէն տնօրինում էր իր կենտրոնը, որը կոչւում է Հայ մշակութային ուսումնասիրութեան եւ վաւերագրումի կենտրոն, ու ազգային աշխատանք էր ծաւալում: Անցեալ տարի Իտալիա հրաւիրեցինք Իրանի Եկեղեցիների կենտրոնի տնօրէն Շերլի Աւետեանին եւ նա յաջող երոյթ ունեցաւ, նաեւ կազմակերպեց հանդիպում՝ Իտալիայում Իրանի դեսպանի հետ եւ այսպիսով՝ համագործակցութեան նոր եզր բացուեց Իրանի ու Իտալիայի միջեւ՝ յուշարձանների եւ պատմական կոթողների վերանորոգման առումով»:

Խօսելով Ս. Թադէի վանքի ուխտագնացութեան մասին՝ նա ասաց. «Թէեւ վերջին տասնամեակի ընթացքում երկրորդ անգամն է, որ մասնակցում եմ այս ուխտագնացութեանը, բայց իրապէս խիստ տպաւորիչ էր: Նախքան Իտալիա տեղափոխւելը, նաեւ երիտասարդ տարիքում, անգամներ մասնակցել եմ վանքի ուխտագնացութեանը, նոյնիսկ ժամանակին դերակատարութիւն եմ ունեցել եւօրեայ ուխտագնացութեան կազմակերպման հարցով: Ես պէտք է առաւել ուժ ու կրողով մաղթեմ Շերլի Աւետեանին՝ իր ծաւալած աշխատանքների համար»:

Զրմուցալար՝ ԿԱՐԻՆԵ ՂԱԽԹԵԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆ

## Գաւառի թափրոնը հիմնանորոգում է



Գաւառ, «Արմէնպրես»-Շարունակւում են Գաւառի Լեւոն Քարանթարի անվան Պետական դրամատիկական թատրոնի բեմի վերակառուցման աշխատանքները: Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ Արմէն Ջոհրաբեանն «Արմէնպրես»-ի հետ գրոյցում նշեց, որ, ըստ մասնագէտների ուսումնասիրութեան արդիւնքների, թատրոնի շէնքն ունի 5-րդ աստիճանի վնասւածութիւն: Որոշւել է ամբողջապէս ապամոնտաժել բեմի հատւածը, իսկ մնացած մասում կատարել ամրացման աշխատանքներ: Քանգամն աշխատանքների, շէնքի քանդում մասի հիմքի մաքրման ու հողային աշխատանքների համար պետքի չէ յատկացել է շուրջ 70 մլն. դրամ: Աւարտւել են շէնքի քանդման եւ հողային աշխատանքները: Կառուցւել են շէնքի հիմքերը եւ նկուղային յարկը: Իսկ թատրոնի բեմական մասի հիմնանորոգումն աւարտին հասցնելու համար կը պահանջվի եւս 150 մլն. դրամ: Գաւառի Լեւոն Քարանթարի

